

Պաշտոնական ընդդիմախոսի կարծիք

Արա Դավաթյանի «Ինքնասպանությունների ռիսկի գործոնները, և վերջիններիս միջոցով ինքնասպանությունների կանխարգելմանն ուղղված մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԴ.00.17 «Հանրային առողջություն և առողջապահության կազմակերպում» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածու գիտական աստիճան հայցման համար

Ինքնասպանությունը հանրային առողջության կարևոր հարցերից մեկն է:

Ամեն տարի աշխարհում ինքնասպանությունից մահանում է մոտ 700.000-800.000 մարդ: Յուրաքանչյուր ինքնասպանությանը բաժին է ընկնում ինքնասպանության փորձերի զգալիորեն ավելի մեծ քանակ: Ինքնասպանությունների ռիսկի գործոն է նաև նախկինում կատարված ինքնասպանության փորձը:

Ինքնասպանությունների պատճառները բազմազան են, և արագ փոփոխվող աշխարհում կարող են փոխվել նաև դրանց ցանկը կամ հերթականությունն ըստ հաճախականության: Յուրաքանչյուր ինքնասպանություն ողբերգություն է, որն ազդում է ընտանիքի, համայնքի և ի վերջո ամբողջ երկրի կյանքի վրա: Ինքնասպանությունները կատարվում են տարբեր տարիքային խմբերի մարդկանց կողմից: Ինքնասպանությունը լուրջ խնդիր է, որն ազդում է բնակչության առողջության վրա և պահանջում է համապատասխան միջոցներ հանրային առողջության կողմից:

Արա Դավաթյանի «Ինքնասպանությունների ռիսկի գործոնները, և վերջիններիս միջոցով ինքնասպանությունների կանխարգելմանն ուղղված մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով կատարված աշխատանքը մեր հանրապետության համար խիստ արդիական է և կարևոր: Այդ հարցերը սերտորեն առնչվում են նաև ազգային անվտանգության հետ՝ աճող սերնդի առողջության պահպանման տեսանկյունից:

Ստենախոսությունը շարադրված է 126 էջի վրա, ունի դասական կառուցվածք, կազմված է 3 գլխից, ներածությունից, ամփոփումից, եզրակացությունից, գործնական առաջարկություններից, պարունակում է 22 աղյուսակ և 17 գծապատկեր: Ներածության մեջ հիմնավորված են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտի ընտրությունը, նորույթը, ներկայացված է գիտագործնական նշանակությունը:

Մեթոդաբանության բաժնում հիմնավորված են հետազոտության կառուցվածքը, հետազոտության կազմակերպման մեթոդները, ընտրանքի ծավալը:

Առաջադրված նպատակին համաձայն՝ հեղինակի կողմից մանրակրկիտ ուսումնասիրվել են ինքնասպանությունների ծավալային, կառուցվածքային ցուցանիշները, ինքնասպանությունների կատարման եղանակները, շարժառիթները, ինքնասպանություն գործող անձանց զբաղվածությունը (սոցիալական կարգավիճակը), ալկոհոլի և ինքնասպանությունների միջև հնարավոր կապը, թմրանյութերի և ինքնասպանությունների միջև հնարավոր կապը:

Ստացված արդյունքները թույլ են տվել արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում 2011-2020 թթ. ընթացքում արձանագրվել է 1858 ինքնասպանության դեպք: Հայաստանի

Հանրապետությունը դասվում է ինքնասպանությունների ցածր մակարդակ ունեցող երկրների շարքին: ՀՀ-ում ինքնասպանություններից մահացության տեսակարար կշիռն ընդհանուր մահացության կառուցվածքում կազմել է 0,57-0,77%, իսկ արտաքին պատճառներից մահացության կառուցվածքում՝ 13,4-16,9%:

Հեղինակի կողմից ինքնասպանություններն ուսումնասիրվել են նաև ըստ սեռի ու տարիքի և պարզվել է, որ ինքնասպանություն գործող անձանց մեջ արական սեռի ներկայացուցիչները մոտ 3 անգամ ավելի շատ են իգական սեռից: 30-65 տարեկան անձանց տեսակարար կշիռն ամենաբարձրն է (46,6-63,1%):

Պարզվել է նաև, որ սուիցիդների կատարման եղանակներից առաջին տեղը զբաղեցնում է կախումը (56,3-62,6%), երկրորդ տեղում է բարձրությունից վայր նետումը (13,5-20,8%): Սուիցիդների՝ կախվելու և բարձրությունից վայր նետվելու եղանակների գումարային արժեքն ըստ տարիների տատանվում է 73,1-82,8%-ի սահմաններում:

Հեղինակի կողմից հաստատվել է, որ ալկոհոլ օգտագործած ինքնասպանություն գործած անձանց մեջ արական սեռի անձինք ավելի քան 7 անգամ հաճախ են գործում ինքնասպանություն, քան իգական սեռի անձինք: Իգական սեռի անձանց շրջանում ինքնասպանությունների 15-24%-ը եղել են ալկոհոլ օգտագործած վիճակում, իսկ արական սեռի անձանց շրջանում՝ 33-54%-ը: Առաջին տեղը զբաղեցնում են 30-65 տարեկան ինքնասպանություն գործած անձինք՝ 59,8-73,1%, երկրորդ տեղը զբաղեցնում են 66 և ավելի տարեկանները՝ 14,7-22,7%:

Գնահատվել է նաև ինքնասպանություն գործող անձանց շարժառիթները: Ինքնասպանության դեպքերից 25,8%-ը բաժին են ընկնում հիվանդություններին, 17,5%-ը՝ սոցիալական հողի վրա կատարված ինքնասպանություններն են, 9%-ը՝ անձնական վշտով պայմանավորված ինքնասպանություններն են: Ինքնասպանություն գործած անձանց սոցիալական կարգավիճակի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանցից ամենաշատը կազմում են գործազուրկները՝ 46,7%:

Արձանագրվել է, որ հոգեկան առողջության խանգարումով անձանց շրջանում ինքնասպանությունների քանակությունը զգալիորեն ավելի է, քան այլ պատճառներից մահացությունը՝ 2-20 անգամ, միջինում 5,2 անգամ:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ՀՀ ազատությունից զրկման վայրերում ինքնասպանություն գործող անձանց 100%-ն արական սեռի ներկայացուցիչներն են:

Իրականացված հետազոտությունների արդյունքներով բացահայտվել են սուիցիդալ ռիսկի գործոնները:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ անհրաժեշտ է նշել, որ Ա. Դալլաքյանի կողմից կատարվել է ծավալուն, մանրակրկիտ աշխատանք, իրականացվել է ստացված արդյունքների բազմակողմանի, համալիր վերլուծություն: Ատենախոսությունը պարունակում է գիտական նորույթ, ունի մեծ գործնական նշանակություն, մշակվել և տրվել են առաջարկություններ՝ ուղղված ինքնասպանությունների կանխարգելմանը, ինչը կարևոր նշանակություն ունի ազգաբնակչության կյանքի ու առողջության պահպանման հարցում:

Նյութերի շարադրման կառուցվածքը լիովին համապատասխանում է աշխատանքի նպատակներին ու առաջադրված խնդիրներին: Ատենախոսության արդյունքները հրատարակվել

են պահանջված թվով աշխատանքներում, այդ թվում ազդեցության գործակից ունեցող միջազգային ամսագրում: Հետազոտությունները կատարվել են գիտամեթոդական բարձր մակարդակի վրա: Ատենախոսությունն իրենից ներկայացնում է ավարտուն գիտական մշակում, ինչը բնութագրում է հեղինակին՝ Ա. Դալլաքյանին, որպես հասուն, կայացած գիտաշխատող, ով տիրապետում է ժամանակակից մեթոդներին, կարող է ստացված արդյունքների, հավաքագրված նյութերի վերլուծությամբ առաջադրել և լուծել դրված գիտական խնդիրները:

Ատենախոսության սեղմագիրն իր բովանդակությամբ ամբողջովին արտահայտում է աշխատանքի էությունը:

Հայոց լեզվական առումով ատենախոսությունը գրված է շատ գրագետ:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով ներկայացված աշխատանքը, այնուհանդերձ կան որոշ հարցեր և առաջարկություններ.

1. Ատենախոսության «Ներածություն» բաժնում գերադասելի էր ավելի լայն ներկայացնել ընտրած թեմայի և կատարած աշխատանքի հիմնավորումը, որն իմ կարծիքով սեղմ է ներկայացված:

2. Օգտագործված գրականության ցանկը ցանկալի էր լրացնել վերջին 2-3 տարիների ընթացքում հրատարակված աշխատանքներով, ինչը որոշ չափով կհամալրեր ցանկը: Ատենախոսության 6-րդ եզրակացությունում հեղինակը նշել է, որ 2020 - 2023 թթ. ժամանակահատվածում չի նկատվել սուիցիդների և պատերազմների ու կորոնավիրուսային համավարակի միջև որևէ կապ, սակայն 2022 - 2023 թթ. տարիներից հրատարակված սկզբնաղբյուրները բացակայում են թե՛ գրականության տեսության բաժնում (Գլուխ 1), թե՛ գրականության ցանկում:

3. Ինքնասպանություն գործող անձանց տարիքային խումբը հեղինակը բաժանել է 4 ենթախմբերի՝ մինչև 17-ը ներառյալ, 18-29, 30-65, 66 և ավելի: Կարծում եմ, որ կարելի էր 30-65, 66 և ավելի տարիքային խմբերը ևս տարանջատել տասնամյա տարիքային սահմանմամբ, ինչպես նախորդ ենթախմբում:

4. «Եզրակացություններ» բաժնում ցանկալի էր 1-5-րդ եզրակացությունները շարադրել հնարավորինս հակիրճ՝ խուսափելով բազմաթիվ տոկոսային ցուցանիշների ներկայացումից:

Նշված թերությունները և առաջարկություններն այնուամենայնիվ չեն նսեմացնում աշխատանքի արժեքը և բարձր գնահատականը:

Այսպիսով, Արա Դալլաքյանի «Ինքնասպանությունների ռիսկի գործոնները, և վերջիններիս միջոցով ինքնասպանությունների կանխարգելմանն ուղղված մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով կատարված ատենախոսության արդիականությունը, աշխատանքների ծավալը, նորույթը և գիտագործնական նշանակությունը թույլ է տալիս ամփոփել, որ այն լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանին:

ԱՆ ԱԱԻ Նյարդաբանության և
նեյրոփիրաբուժության ամբիոնի
խորհրդատու, բ.գ.դ. (ԺԴ.00.17), պրոֆեսոր
15.01.2025 թ.

Յու. Ս. Թունյան

Յու. Ս. Թունյանի ստորագրությունը
հաստատում եմ
ԱՆ ԱԱԻ գիտական քարտուղար, բ.գ.թ.



Ն. Դ. Խաչատրյան